

38-11
2986

ՓՈՒՔՐԻԿ ԶԿՆՈՐԱԸ



895.65
4-57

ՄԵՏՅՐԱՍ

ՅԵՐԵՎԱՆ

Թարգմանություն
Հովհ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ



895.65

2011-07

Կ-97. ՃԱՊՈՆՍԱԿԱՆ ՀԵՔՅԱԹ

ՓՈՔՐԻԿ ԶԿՆՈՐՍԸ


ՊԵՏՏՐՍ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊ. ԳՐ. ԲԱԹԻՆ
ՑԵՐԵՎԱՆ 1938

28.000.201

13992



56561-66



Շատ-շատ տարի առաջ ճապոնական ծալի ափին մի ջահել ձկնորս է լինում, անունը Ուրաշիմա: Մի լավ ու բարի տղա յե լինում Ուրաշիման և հմուտ ու կարթ գցող:

Մի անգամ գնում է ձուկը բռնելու: Չկան տեղ ջրից հանում



Ե՛ ի՞նչ եք կարծում, ի՞նչ... Մի
մեծ, ահագին կրիա: Բայց եստեղ
ձեզ դեռ մի բան պիտի ասեմ,
վոր գուցե դուք չգիտեք. եզ
են ե, վոր կրիաները ապրում են
մինչև հազար տարի:

Ուրաշիման իրեն իրեն միաք
ե անում թե՛ ավելի լավ եր սրա
տեղը մի ձուկը բռնեյի, գոնե
ճաշին կուտեյի: Իսկ սրան ի՞նչ
անեմ. ինչու սպանեմ ես խեղճ
կենդանուն, ինչու արգելեմ դեռ
իննը հարյուր իննսուն իննը
տարի ել ապրելու: Չե, եղպես
խստասիրտ չեմ լինիլ: Յես գի-
տեմ, եզ իմ մորն ել չի դուր
գալ:»

Ու կրիան կրկին գցում է ծովը:


Սրանից հետո Ուրաշիման քնում է իր նավակում: Որն ել ամառվա են տաք որերից է լինում, յերբ ամեն մարդ ուզում է ճաշից հետո մի քիչ քնի: Քնած ժամանակ ծովի անդունդից դուրս է գալիս մի սիրուն աղջիկ, մտնում է նավակն ու ասում.

— Լսի՛ր Ուրաշիմա, յես ծովի թագավորի աղջիկն եմ, իմ հոր հետ ապրում եմ ծովի հատակին վիշապների ապարանքում: Վուչ թե կրիա յեր քո բռնածը, այլ յես եյի: Իմ հայրը, ծովի աստվածը, ուղարկել եր ինձ փորձով

Իմանալու դու՛րս բարձի՛ր յես թե չես:



Մենք այժմ գիտենք, վոր դու
մի լավ ու բարի սղա յես, վոր
յերբեք խստասիրտ չես կարող
լինել, և ահա յես յեկել եմ քո
յետևից: Յեթե կուզես յեկ ամուս-



նացիր ինձ հետ ու հազար տա-
րով բախտավոր ապրենք կա-
պույտ ծովի հատակին, վիշապ-
ների ապարանքում:

Եստեղ թիակն առավ Ուրաշի-






ման, մյուս թիակն առավ ծովի
թագավորի աղջիկն ու յերկար
թիավարում էյին, մինչև հասան
ծովի տակի վիշապների ապա-
րանքը, ուր բնակվում էր ծովի
աստվածը ու իշխում էր վիշապ-



ների, կրիաների ու ձկների վրա։
Ախ, ինչ լավ էր ենտեղ։ Պա-
տերը մարջանից էյին, ծառերի
տերևները—զմբուխտից, պտուղ-
ները—հակինթից, ձկների թե-

փերը — արծաթից, վիշապների
տրտները մաքուր փոսկուց: Ու
եղ ամենը պատկանում էյին
Ուրաշիմային, փորովհետև նա ծովի
աստծու փեսան էր, չքնաղ Սեն-
Նինիի ամուսինն էր: Ու ապրում




էյին անհող, յերջանիկ: Միայն
հայրենի յերկրի ու հարագատ-
ների կարտոր մտել էր Ուրաշի-
մայի սիրտը և զորանում էր
որեցոր:





Անցավ յերեք տարի: Մի առա-
փոտ ել Ուրաշիման ասով.



— Յես շատ եմ բախտավոր
հատեղ, ես հրաշալի դրախտում,
քեզ հետ, իմ աննման Սեն-Նինի,



բայց սրտով ուզում եմ մեր
տունը գնամ, տեսնեմ վոնց են
իմ անոգնական, ծերացած հերն
ու մերը, իմ քույրերն ու յեղբայր-
ները... Ել յետ վերադառնամ քեզ
մոտ:

— Յես թեև հակառակ եմ քո
ցանկությանը, բայց չեմ կարող
ուժով բռնել, յերբ ուզում ես
հեռանաս, ասավ Սեն-Նինին: Գնա՛,
բայց հետզ վերցրու ես տուփը և
զգույշ կաց, բաց չանես: Յեթե
բաց անես, իմացիր, վոր ել յեր-
բեք, յերբեք չես կարող վերա-
դառնալ ինձ մոտ:

Ու մի գեղեցիկ տուփ տվեց
Ուրաշիմային:

Ուրաշիման խոստացավ բաց
չանի, ինչ ուզում ե լինի: Ապա
Սեն-Նինին մի քուն բերավ նրա
վրա. մին ել աչքը բաց արավ՝
տեսավ իր հայրենիքի յեզերքին:

Բայց ինչ եր պատահել իր
բացակայությանը: Վճրտեղ եր
իր հորական տունը: Վճրտեղ եր
իրենց գյուղը: Ճիշտ ե, սարերն
իրենց տեղն էյին, բայց նրանց
անտառները չկային: Հոսում եր
և իրենց տան մոտի վտակը,
սակայն ել առաջվա նման կանայք
վացք չէյին անում նրա մեջ:
Չարմանալի յեր թվում, թե մի
վորևե յերեք տարում ինչպեա

էյին եղ ամենը եղքան փոխվել:

Ես մտածմունքի մեջ Ուրաշիման
պատահեց մի անցորդ ծերունու:


— Ասա խնդրում եմ, բարի
ծերունի, ուր ե փոխադրվել Ուրա-
շիմայի տունը, վոր կանգնած եր
եստեղ:

Ծերունին հիշեց ու պատմեց,
թե մանուկ ժամանակ լսել ե,
վոր հարյուրավոր տարիներ առաջ
մի Ուրաշիմա ե յեղել, գնացել
ե ծովը ձուկ վորսալու ու ել յետ
չի յեկել: Նրա ծնողները, յեղբայր-
ները, նրանց վորդիքն ու թոռ-
ները վաղուց-վաղուց են մեռել,
իսկ տունը ավերվել, անցել, հողի
հետ գնացել:





Եստեղ գլխի ընկավ Ուրաշիման,
վոր ծովի ասածու ապարանքը
մարջանի պատերով, հակինթի



պտուղներով ու վոսկետուտն վի-
շապներով կախարդական աշ-
խարհքն ե յեղել, վոր ենտեղ
անցկացրած մի որը հավասար ե
յեղել յերկրի մի տարուն:

Ու հեռացավ իր հայրենիքից,
քանի վոր մեռել եյին իր բոլոր
հարազատները և մինչև անգամ
իրեն ծանոթ ծառերն ել չըկային:

Սաստիկ ցանկացավ վերադառ-
նալ նորից ծովի հատակը, չնաշ-
խարհիկ Սեն-Նինիի մոտ, բայց
ի՞նչպես, ի՞նչ ճանապարհով: Վոչ
մի կերպով չկարողացավ գտնի և
չըկար մեկը, վոր առաջնորդեր
նրան կրկին ենտեղ կախարդական
աշխարհքը:

Կանգնեց միտք արավ Ուրա-
շիման:

— «Յեթե բաց անեմ ես տուփը,
վոր տվել ե ինձ Սեն-Նինին, գուցե
թե գտնեմ ճանապարհը, վոր
տանում ե նրա մոտ»:

Ու բաց արավ տուփը: Յեվ
ի՞նչ գուրս յեկավ միջից: Մի կտոր
թեթե ամպիկ, վոր վերացավ,
ծուխ դարձավ գնաց դեպի ու-
կիանոս, կախարդական աշխարհքի
կողմը: Ուրաշիման նոր հիշեց կնոջ
խոսքը, վոր բաց չըպիտի աներ
տուփը, աղերսեց, վոր կանգնի,
վաղեց յետևից, ցավից լաց յեղավ:

բոլորն իզուր. ամպիկը ցնդեց,
ցրվեց, վերացավ, հեռացավ ան-
դարձ, անհետ:

Ու ետեղ ել տեղնուտեղը հա-
տավ Ուրաշիմայի ուժը, ել վոչ
վազել կարողացավ, վոչ կանչել:



Հանկարծ մազերը ճերմակեցին
ձյունի պես, յերեսը կնճռոտեց,



մեջքը կորացավ զառամ ծե-
րունու մեջքի նման, շունչը կրտ-
րեց ու մեռած ընկավ ծովափին:

Խեղճ Ուրաշիմա. չիմացավ,
վոր Չահելուժյան գաղտնիքն էր
ամփոփված կախարդական տուփի
մեջ, վոր տվել էր իրեն հավեր-
ժահարս գեղեցիկ Սեն-Նինին: Թե-
թևամիտ անհամբերությունից բաց
արավ ու կորցրեց: Զրկվեց Չահել,
յերկար կյանքից ու յերջանիկ ապ-
րելու վայելքից: Բայց նա սիրող,
ազնիվ սիրտ ուներ ու գնաց իր
սրտի յետևից: Եղ է պատճառը,
վոր մինչև որս էլ Ճապոնիայում
չեն մոռացել Ուրաշիմային ու

Նրա խորհրդավոր պատմությունը:
Յեվ շատ տեղերում պաշտում են
Նրան նրա համար, վոր նույնիսկ
աստվածների անհող աշխարհքում,
Սեն-Նինիի սիրո մեջ էլ չբո-
ռացավ իր հարազատներին ու իր
աղքատ ծննդավայրը:



Խմբագիր՝ Նվ. Թումանյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Քասաբաբյան
Սրբագրիչ՝ Թ. Հովակիմյան

Գլխավոր լիազոր՝ Ղ.—3509. Հրատ. 4455.
Պատվեր 92. Տիրաժ 5000
Թուղթ 72×105 Տպագր. 1 մամ.
Մեկ մամ. 11500 նշ. Հեղին. 1/7. մամ.
Գինը 1 ս.

Պետհրատի 1 տպարան, Յերևան, 1938

<< Ազգային գրադարան



NL0403060

19
ԳԻՆԸ 1 Ռ.

288

13992

Handwritten signature

Handwritten mark

1
2

38-1
2986